

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻ ԳՐԱՆ ԱՐՓԻ ԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 23

3 ՅՈՒՆԻՍ 1900

Մասիս շաբաթաթերթի [սարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ
եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասանման՝ 12 Գրանգ : Վեցամսեայ կամ ե-
ռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն
ամսոյ մէկ :

Լ լարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ, եւ կը զտուի Բերայի բոլոր ծխա-
վանաւորներուն ու Պահչե-Գաբուի ջրավանաւորներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-
թիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավանաւորներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԻ

درعليه ده غلطه «ماسيس» غزنه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստանկեան Խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԻՒՆԻՕՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէկ նոր յաջողութիւնը ծանուց-
 ուեցաւ վերջին օրերս, — յաջողութիւն զոր հաճութեամբ կ'արձանագրենք՝ շնորհաւորելով
 այս առթիւ Ընկերութեան Թուրքիոյ ճիւղին Ընդհ. Տնօրէն Քայսերեան Սիմոն էֆ.ն եւ
 կենաց ճիւղին տեսուչ Տէր Ներսէսեան Միհրան էֆ.ն որոնք այնքան պատուաւորապէս
 կը ներկայացնեն Իւնիօնը, Օսմ. Հանրային Պարտուց Վարչութիւնը վերջնապէս որոշեր է Կ.
 Պոլսոյ ու գաւառներու մէջ իր ունեցած ընդհանրօր պաշտօնէից կեանքը ապահովագրել
 տալ Իւնիօնին: Ապահովագրելի պաշտօնէից թիւը կը հասնի երեք հազարի: Այս իրողու-
 թեան մէջ երկու ուշագրաւ կէտեր կան զորս Մասիս ալ, իր կարգին, կարեւոր կը համարի
 վեր առնել: Հանրային Պարտուց Վարչութիւնը իր այս տնօրինութեամբ կուգայ շեշտել օգ-
 տակարութիւնը կենաց ապահովագրութեան որուն ընդհանրացումը տակաւին զանազան
 կանխակալ կարծիքներու եւ նախապաշարումներու կ'ընդհարի մեր մէջ: Երկրին զանձային
 ամենակարեւոր մէկ հաստատութիւնը, որուն գլուխը կը գտնուին բնիկ թէ օտարազգի կա-
 րող երմոագէտներ, երբ այսպիսի որոշում մը կուտայ եւ անով կը հաստատէ կենաց ապա-
 հովագրութեան օգտակարութիւնը, այլեւս տեղի չի մնար վարանելու եւ մտածելու թէ
 արդեօք պէ՞տք է ապահովագրուիլ թէ ոչ: Երկրորդ կէտը սա է թէ, Թուրքիոյ մէջ գոր-
 ծող ապահովագրական օտար ընկերութիւններէն Իւնիօնի տրուած նախապատուութիւնը
 անգամ մըն ալ կը հաստատէ սոյն Ընկերութեան պատուաւոր դիրքը եւ այն առաւելու-
 թիւնները զորս կ'ընծայեն իր ի գործ դրած ապահովագրական եղանակները եւ իր գինե-
 րուն չափաւորութիւնը որոնք Հանրային Պարտուց Վարչութեան կողմէ ձեռնհասօրէն քըն-
 նուելէ ետքը հաստատուած են, — ինչ որ նոր վարկ մը կուտայ Իւնիօնի վարկին:

“ԱԼԼԷԱՆՁԱ,”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ ԵՒ ԵՐԱՇԽԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայ-
 մանաժամերով, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ ա-
 ռաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութեանէ ետքը, երբէք ապահովագիրները (քօշիս) չեն
 ջնջուիր, մենամարտն ու անձնապանութիւնը կ'երաշխաւորուին, բնաւ ո եւ է ար-
 հեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագին (քոխս) չի պա-
 հանջուիր, ապահովագիրներու վճարումը գաղտնի պարագային՝ ապահովագիրը կը
 գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չառնուիր, ընկերութեան
 շահերուն կը մասնակցի ապահովագրուողը:

Արկածեալներու դիմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողու-
 թեան պարագային՝ ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէյի, երկաթուղիի,
 շողեմաւի, առագաստանաւի, միջատներու խայթուածքի եւ ապահովագրուողին ար-
 հեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ
 մարդ մը կամ ինչք մը աղատելու առթիւ պատահած ո եւ է արկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, Թիւ 53, 54, 55, 56

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղ-
 եաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ գաղղիական ախտերու: Բերա, Թաղսիմ փո-
 ղօց, Թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ՄԱՍԻՆ

49րդ ՏԱՐԻ

— 3 ՅՈՒՆԻՍ 1900 —

ԹԻԻ 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիւանդանոցէն ներս. ԱՂԵՔԱՍ. ՓԱՆՈՍԵԱՆ. — Տգեղը (Նորայկայ) ՎԱՀԱՆ ՄԱՆԷՋԵԱՆ. — Մեկնութեան փորձեր. ԱՐՄԻՆԷ. — Կես. Բժշկական. ՏՈՒԹ. Յ. ՏԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Օրուան Նօթեր. ՏԻԴԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. — Կարօտներս. (Բաւաստեղծութիւն). ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. — Արուեստանդէսը (Բարիգեան աւճաղանգ). ԱՐՈՒՆՍՏԱՍԵՐ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Շատ տխուր ու անմուսնայի դառնութեան յիշատակ մը պահած եմ՝ 1892ի ձմրան մէջ Հիւանդանոցը բրած այցելութենէս . . . Ինձ չափ զինքը սիրող բարեկամի մը հետ, այն օրն հիւանդանոցէն դուրս գալու քիչ քիչ տարաբաղդ Սրբանձառանց Սրբազանին, եւ գտած զինքը՝ ցածուկ, փոքրիկ, անշուք ու անշնորհք փայտաշէն սենեկի մը մէջ առանձին, անկողնոյն վրայ տարածուած անշարժ, ոգեւարի հոգն-դիւնն հեւալով տաժանագին . . . Գետինը՝ քրքրուած խորի մը կար միայն, ու ասանկ մանկալի մը մէջ՝ ափ մը կրակ . . . Բովը՝ խարստ ու թուր մը վրայ, աղտոտ ու հինուկ ճերմակեղէնները, պատէն կախուած՝ իր վե-րարկուն ու զգեստները, եւ պատառատուն խեղճուկ բազմոցի մը անկիւնն ալ՝ տափակ ու կոշտ բարձի մը վրայ՝ թաւեայ խալարի, քովը ցիր ու ցան մէկ քանի գիրքեր ու լրագիրներ . . . — Հիւանդանոցէն որ մեզի կ'ընկերանար, ըթմարտ ու անզգայ խրոխտ մը, տեսնելով որ հէգ հիւանդը ջերմի զօրաւոր ցնցումով մը մէկ կողմէն հետաքննելու ծածկող սղորմելի վերամակը, մօտեցաւ իսկոյն մահ-ճակալին, եւ ծածկոյցը քաշելով տակէն՝ վրան բերաւ ա՛յնքան բրտութեամբ որ երկվայր-կեան մը հոնդիւնը դադրեցաւ ու երկար ու ցաւատանջ ա՛յն մը թաւ ոգեւարին փրփրած

չրթներէն դուրս . . . Ո՛չ ճանչցաւ զմեզ ո՛չ ալ բաւ մը կրցաւ արտատանել փսիարէն այն մէկ քանի կարեկցական հարցումներուն զօր ուղղեցինք իրեն, զորոնք չիմացաւ, չհասկցաւ ալ գուցէ . . .

Հիւանդանոցէն, ապուշ եւ անտարբեր, մեր խորին ու սասանած վիշտն ապտակեց յանկարծ, ըսելով — «Է՛, հայտեցէ՛ք, տղա՛ներ, ալ ի՞նչ կեցեր էք, իշտէ կ'երթայ կոր . . . »

Եւ անցեալ օր, լարուած զրգուած հե-տաքրքրութեան մը հետ, սրտի մեղամաղձիկ սեղմումով մը ներս կը մտնէի նոյն յարկին դռնէն . . . Ինձ այնպէս կուգար որ, հին յիշած իս համանման, շատ մը, անընդհատ, ցածուկ եւ անշուք սենեակներու մէջ, ուշադրոյս անյայտ հիւանդներ պիտի տեսնէի, ոգեւարի հոնդիւնները պիտի լսէի նորէն . . . — Բայց ո՛չ. քարհերն ու վարհերը փոխուած են հիմայ . . . Հիւանդանոցին ալ մէջ :

Առաջին սենեակն ուր կ'երթամ, հիւրա-նոցն է, չափաւոր ու կոկիկ սենեակ մը, եր-կու բազմոց եւ աթոռներով, ու մէջտեղն ալ սեղանի մը վրայ շիշով ջուր, գաւաթներ, ու . . . քոնեաք եւ շաքար, որով կը մեծա-քան զլու : Պատին կից զրադարան մը կայ, բժշկաց յուշարար գրքերու հաւաքածոյով մը, եւ սեւ տախտակ մը պատին վրայ, որ

գիտական դատաւանդութեանց եւ ասպացոյ-
մանց կը գործածուի : Հոն են՝ Տոքթ. Զար-
դարեան , Տոքթ. Տաղաւարեան , Տոքթ. Իւ-
լիկճեան , Տոքթ. Բարաղամեան եւ Տոքթ.
Գաղաղեան . Տոքթ. Տաղաւարեանը՝ բժշկա-
պետ է , եւ ՏԵՍՈՒՆ Զեքիյն հիւանդութեանց-
այցելու է ինքը . իսկ իր փոխանորդն , Հի-
ւանդանոցին մնայուն բժիշկը , Տոքթ. Իւ-
լիկճեանն է , շատ ուշիւ՝ ու խղճամիտ աշխա-
տող երիտասարդ մը դեռ , որ հին-վարպետի
մը լրջութիւնն ու ուշադրութիւնը ցոյց կու
տայ իր հարիւրաւոր հիւանդներն ամէն ժամ
հսկելու , քննելու եւ խնամելու գործին մէջ :
— Նոյն ճարտարութեան եւ արժանեաց տա-
րազն ու քանակն ունին իր միւս երկու պաշ-
տոնակիցներն ալ , Տքթ. Բարաղամեան , մնա-
յուն օգնական՝ վիրաբոյժ Տքթ. Զարդարեա-
նի , եւ Տքթ. Գաղաղեան մնայուն տեղակալ
յիմարարայժ Տքթ. Մոնճէրի , — որոնք վըս-
տահարար , մէկ քանի տարի ետքն , այս
փորձառական դպրոցէն ընթացաւարտ , աղ-
գին լաւագոյն բժշկաց կարգը պիտի անցնին :
Զիւնասպիտակ ճերմակ կառէ բըտէնիօթներ
հագած , գլուխին բաց , հինգ բժիշկներու
այս ընկերութիւնն , հոն , հիւանդներուն ճիշդ-
քովը , հսկող ոյժի մը համազմամբ կը հովա-
հրէ հոգւոյ վարանումներն . ու կը դիտեմ
Տքթ. Զարդարեանը , միջահասակ , ասույց
ու թիկնեղ , կարմիր կենտոյրի դէմքով այն
մարդը որ այժմու Հայոց-Գամպուր օղուն ,
առաջին վիրահատ բժիշկն է : — Շատ զուարթ
է , կարելու , կարելու , կապելու , սկիորներն
ու ջիղերն ու երակները իր ուզած ձեւովն ու
եղանակովը մաքրել , գտել , շտկել ու կար-
գաւորելու արիւնագանգ առօրեայ գործին
արիւնկղակ վարպետն է ինքը , եւ իր սուր
աչքն եւ տւելի՛ սուր դանակը իր արագ
մատներուն միջոցաւ ներքին եւ արտաքին
փառութեանց , վէրքերու , այտուցքներու եւ
կոտորած սկիորներու յապաւումն ու բու-
ժումը կ'իրագործեն , ընտիր համբաւ մը
չինելով — ո՛չ իրեն , որովհետեւ ունի արդէն
— հապա մեր Հիւանդանոցին :

Հիւանդապահ մը կ'երեւայ դուռը... «Պատ-
րա՛ստ է , տօքթէօր...» «Շատ աղէկ , եր-
թանք...» Եւ մինչ Տքթ. Զարդարեան

դռնէ մը անյայտ կ'ըլլայ Տոքթ. Բարաղամ-
եանին հետ , opération մ'ընելու համար ան-
գին , մենք ալ մեր պսոյջը կը սկսինք ասդին ,
սրահներուն մէջ : Հա՛րկ է երկար բարակ
նկարագրել տեսարանը... քովէ քով կամ
մէջէ մէջ , 10-20-30-40 անկողին պարունա-
կող սրահները , ուր կոկիկ միաձեւ երկաթէ
մահճակալներու վրայ , կքած , նստած , պառ-
կած կամ ընկողմանած , հիւանդներ ու միշտ
հիւանդներ՝ կան միայն , ամէն հասակ ու
տարիքէ , Պոլէն ու գաւառներէն , անտուն
անտէր , թշուա՛ռ հիւանդներ որոնք Աղգին
Գիթութեան Տունն եկած ապաւինած են...
— Ահա շարագրութեան պատուական նիւթ

մը , որով հրապուրուելու ժամանակն անցու-
ցած եմ շատոնց... Ըսեմ միայն թէ Հի-
ւանդանոցի նոր շէնքին մէջ այսօր առատ
լոյս , առատ ջուր , եւ բացարձակ մաքրու-
թեան հոգ եւ ուշադրութիւն կան : Մաքուր
օդէն սկսելով որ բնութեան պարզեւն է հոն ,
ամէ՛ն բանին ալ մաքրութեանը անընդհատ ,
անվհատ , անխնայ ուշադրութիւն եւ գոր-
ծադրութիւն կայ ամէն կողմ : — Գետնի
տախտակները կը փայլին կարծես , շիւղ մը ,
թել մը , մալ մը գտնել կարելի չընելու չափ
մաքուր , շիւտած , ալուած են : — Անկողին-
ներու վերմակ , սաւան եւ բարձր կը ծփան
ճերմակութեամբ , հիւանդաց ճերմակեղէննե-
րուն ա՛յլս որոնք կը փոխուին ամէն օր :

Եւ նորակառոյց շէնքին մաքրափայլ ձե-
ղուններն ու պատերը , համակ լոյսի եւ լոյն
անդարձութեան հոսանքով մը ողողուն , պա-
տըստարեւոյ տառապանքին ալ մեղմացում մը
կուտան կարծես , եւ անոնց հիւժեղ ու ակ-
տաժարակ մարմնոց ցաւերն ու յուսահատու-
թիւնը չես տեսներ անոնց դէմքին վրայ ,
չըրթանց սրկումներ , աչքի կծկումներ շատ
քիչ կը նշմարես , հազիւ երբեմն թեթեւ ա՛խ
մը կամ տքացողի հաճախեք մը որ վերմակի
բացուածքն կը սարդի դուրս... :

Տքթ. Տաղաւարեանին հետ կ'անցնինք ու
կ'անցնինք անկողիններու քով... chroni-
que եւ aigu հիւանդութեանց սրահներն , աջ
ու ձախ , դէմքեր կը նշմարեմ որոնք մառ-
նաւոր երջանիկ ժպիտով մը բժիշկին կը նա-
յին , ժանտատենդէ , թոքատապէ բռնուած

ու մահամերձ եկածներն են , որոնք ա՛լ ապաքինման լաւ ճամբուն մէջ , մէկ երկու օրէն պիտի երթան վայելել կեանքին քաղցրութիւնները . . . :

Հարցումներ կ'ընենք , ու գրէթէ միօրինակ պատասխաններ կ'իմանանք :

« Ի՞նչպէս ես , նայի՛նք : » — « Աղէկ եմ , չնորհակալ եմ , Աստուած երկար կեանք ասքթօր . . . » — « Սի՞գ նասըլ սընըզ , էֆէնտի . . . » . . . Հիւանդը , որ 50ամեայ թուրք մըն է , կարկամ , կէս անդամալոյծ եկած ամիս ու կէս առաջ , հիւսա , գրէթէ բուրսիլին բուժուած , ոտք ու ձեռքերը չարժեք կը սկսի եւ չնորհակալութեան ու օրհնութեան խօսքեր կ'արտասանէ Վեհ . Կայսեր , Ազգին , Հոգաբարձուներուն , բժիշկներուն համար : « Սաղ օլտընըզ , Ալլա՛հ էօմիւր վէրսին . . . շօգ էյի իմ . . . » կ'ըսէ , եւ ուրախութենէն կուլայ մարդը : — Et vous, ça va bien, voyons? — Որո՞ւ այս գաղղիերէն հարցումը . . . Անկողնոյն մէջ երկարած յաղթանդամ գաւառացի Հայու դէմք մը կը տեսնեմ . դեղին մազերով , կապոյտ աչերով սակրուտ խոշոր գլուխ մը որ ցնծութեամբ կը պատասխանէ . — Je vous remercie beaucoup, docteur, je me sens bien mieux de jour en jour . . . ու կը շարունակէ անխալ , կոկիկ ու ճիւղն Քրտնսերէնով մը , Տաղաւարեանին հասկցնել թէ մարմնոյն ո՞ր մասերը բուժուած են դեռ , ու մատերը կ'երեւցնէ հրճուածքով . . . — Գատըգիւղի Յրանչիսկեան Գաղղ . Հարց վարժարանին հովիւն է եղեր , արկածի մը հետեւանքով անդամալոյծ , զոր պատգարակով բերեր են — ու ցատքըտելով պիտի երթայ մէկ քանի օրէն :

Մեր շատ մը շրջանաւարաներէն աւելի մաքուր ու հարապատ չեչուով իր խօսած գաղղիերէնը կուզէի քիչ մը աւելի մտիկ ընել , բայց ժամանակ չկայ : Ա. աստիճանի թռքախառնուող սենեակէն , որոնք բուժելի են , Բ. եւ Գ. աստիճանով հիւծուողներու սենեակը կ'անցնինք . . . : Խեղճ դատապարտուածներ . 3 հատ կան միայն , որոնց աչքին մէջ նայելէ կը խորշիմ յուզումն ու ցաւս մատնելու վախով . . . երբ մին , խղճուկ խժաւուր հեւքով մը , « ա՛խ , տղթօ՛ր ,

կ'ըսէ , սա քեօշէյինը գնաց , ես ե՛րբ պիտի երթամ . . . » — « Բան մը չունիս , կ'աղէկնաս , բայց սիկառ խմելու չէ՛ » կը պատասխանէ առաջնորդս , ու զուրս կ'ելլենք սենեակէն որ մութ Գերեզմանին նախագաւթնէ՛ լուսաւոր :

. . . Դուռ մը կը բացուի . Salle d'opérationն ենք : Մէջտեղը բարձր սեղան մը , լերկ ու չոր , ու վրան մերկ ու նիհար 10-12 տարեկան տղայ մը կը տեսնեմ , երկարած անշարժ . . . : Երկու օգնականներ կը հսկեն քովը , որոնց մին քլօրօֆօրմին խածէգունաղ տղուն քթին բռնած է որով մարած անզգայ է ան , ու միւս կողմը Տքթ . Բարաղամեան բազկերակը կը քննէ անդուլ , մինչ Տքթ . Զարգարեան , թեւերը սոթտած վիրահատի գործիքը ձեռքը , աղեկին ձախ արմուկին սակորը կը քերէ , փութութեան խաւ մը կը հանէ կը մաքրէ հոնկէ . . . : Հիւանդանոցին Ա. դեղագործն ու Տքթ . Իփլիկճեան ալ հոն են , ու գործողութեան կը հետեւին ուշադիր . . . : Վէրք եւ արիւն տեսնել չեմ կըրնար , գլուխս կը դարձնեմ ու վար կ'իջնենք սանդուխէն , կը հասնինք Երանցիներու դըրանն առջեւ . . . : Խուլ աղմուկ մը , ոտքի դափրտուքներ , սուր ձայներ կը լսուին ներսէն , իրարանցումի , շարժման ու գրգռման կոչ ու ճիչերով որոնք կը գաղղին ու կը վերսկսին անընդատ . . . : Դրան բաղլում մը , բանալիի կոխն մը , եւ ահա՛ Արանց յիմարանոցն ենք . . . : — Հիւանդանոցի գետնալարիւր , խորունկ ու երկար , մատանի մը պէս զով , մթաստուեր ու մռայլ ընդարձակ երկու սրահներու մէջ , որոնք ձեղունին մօտ բացուած վանդակաւոր փոքրիկ պատուհաններէ լոյս կ'ընդունին , մոխրագոյն ապայէ տաբատ ու թիկնոցներ հագած են բոլոր . . . անոնք , 150ի չափ , որոնք իրենց խեղքին զեկն ու առագաստը փոթորիկի մը մէջ կորսնցուցած , եկած խրած , ապաստանած են այս տխուր նաւահանգիստը . . . : Հազիւ մէկ քանիներ կը տեսնեմ լուռ ու մտածկոտ . կամ պատին քով արձանացած եղբարական անշարժութեան մէջ . միւսներն անխտիր , ոգեւորուած , փրփրած կը վազվաւտեն , կը պոռան , կը բացադանչեն , կ'երգեն ու կը խնդան . . . : Խորը , փայտէ

երկար սեղանի մը առջեւ 5-6 հատ նստած են, որոնց երկուքը ակնոցաւոր երիտասարդներ են, 20-25 տարեկան հազիւ : Մին, թխագէմ տղայ մըն է, ժոզեյ գլխարկ ունի, սեւ ընտէնկոթ ու նարնջագոյն մետաքսէ փողկապով : Առջեւը փոքր էջ մը թուղթ կայ, եւ ձեռքը մատիտ մը որուն ծայրը ճակտին դրած, աչքերն ալ սրահին անկիւնը սեւեռած, կը նայի՝ ու կը նայի . . . : Խեղճ տղայ, բաւատեօղձ մըն է արդեօք, որ ներշնչման կը սպասէ հոն . . . : — Բովը՝ միւսը նստած է մանիշակագոյն թաւիչէ ոսկեթել բանուած քով գդակ մը գլուխն եւ մոխրագոյն բոլորշաւնայր հագած է կարմիր ծոպերով . . . : Իր խորտեալ ու ժպտուն դէմքը անծանօթ է ինծի : Բայց ինքը կը ճանչնայ զիս ու մաքուր եւ արագ անգլիերէն կը խօսի հետս : Հէ՛ղը, անարգուած սիրոյ, յիմար սիրոյ զոհ մըն է . . . յիմարանոց առաջնորդուած : — Ուրիշ մըն ալ անդիէն անունս տալով, վրաս կուգայ յուզուած, բորբոքած, եւ ձեռքերու ու դէմքի արագ ու անսովոր շարժումներով կը սկսի խօսիլ, խօսիլ ու դանդաղաբար . . . « Եղբայր, ի պէ՛ր Աստուծոյ, ըսէ՛ սըվանց, մեզ թողուն երթանք, մեզ հոս փակեր են, դուրսը խնայ տո՛ւր. դան սըվանց խերն անիծեն, զիս պիտի մեռցնեն, հացիս վրայ կիւլիքիկի կը քսեն ամէն օր, սիկաւ չեն տար, ի պէ՛ր Աստուծոյ, խաղէթան գրէ՛, խերերնին անիծէ՛ սըվանց» . . . Փաստարան մըն է աս երկու տարիէ տեւի կայ որ հոս է, խելքը կորուսած, եւ օրն ի բուն, այսպէս, կը խօսի, կը պուտայ ու կը գանգատի թէ զինքը փակեր են եւ կիւլիքիկի կը կերցնեն իրեն . . . Բայց ես աչքերս՝ հոս ու հոն կը դարձնեմ տեսնելու, գտնելու համար Պետրոս Թէրզեանը : Թիլիպեցի երիտասարդ մի զոր ճանչցած եմ կայտառ, բարեձեւ հասակով, խնդումներս ու արթնամիտ, եւ որուն խենդեցած ու Ետիգուլէ զրկուած ըլլալն իմացած եմ : Որտե՛ւ, ճանչնալ չեմ յաջողիր, եւ կ'ըսեմ Տքթ. Գաղաթեանին, որ դրան կոթնած գլխիկոր մէկը մատնանիշ ցոյց կու տայ : Կը մօտենամ, կու տամ անունը, վեր կ'առնէ գլուխը եւ սեւ աչքերէն կը ճանչնամ զինքը : Անճանաչելի է ողորմելին : Գլուխը ձերմակ զգալի մը դրած,

կուրծքն ու թեւերը բաց, մոխրագոյն շապիկ ու անձեւ ու կարճ տաբատին մէջ մարմինը նիհար, խանձած ու խարխլած կորաքամակ ու սովեալ մորաքցիանի մը պէս երբ կը նայի ինձ ու լալազին մարած ձայնով մը կը խօսի հետս, եւ կու լայ . . . անհուն դառնութիւն մը կը խռովէ հոգիս, եւ խորտակուած ծաղիկ կեանքի մը այս թշուառ ուրուականը սարսուռ մը կ'անցընէ մարմնոյս վրայէն . . . :

Ապուշարանը կ'անցնինք : Մեծ շարժում ու ժխոր մ'ալ հոն կայ : Մամաթիոյ Սափրիչ հայ եղբայրները, 10-12 հոգի, եկած են այն օրն — ինչպէս կու գան միշտ շարաթը երկու անգամ — պատասպարեալներն ամիւլելու : Ու կը տեսնեմ ըմպած, տխմար գլուխներ՝ տարտամ մոլորուն նայուածքներով, քով քովի նստած ու բռնած պղնձէ փոքր կոնքը թուշերուն տակ, որոնք աճառի փրփուր մօրուքին մէջէն բերանաւրայ ինծի կը ժպտին . . . : Ծերուկ մը կը զիտեմ միայն, որ զժպտի ծամածուրթիւններով բաներ մը կը մըթմըթայ, ու կզակը կ'երերցնէ, սափրիչին սաստերուն անտարբեր . . . : Կը մօտենամ, ու կը ըսեմ .

« Տէ՛ր, զի՛ բաղում եղեն նեղիչք իմ. եւ բաղումք յարեան ի վերայ իմ . . . »

Յիմարներու ննջարահն ալ կը շողայ մաքրութիւնը, բայց սպասաւորը հզօր չափ մը կուտէ հոն Տաղաւարեանէն, որովհետեւ պատէն կախ երեսի սրբիչներէն երկուքը աղտոտ են . . . :

Կանանց կողմն երթալու համար պարտէզէն կ'անցնինք ուր 10-15 սպուշներ բահ ու բրիչով հողը կը յորգարեն, մօտակայ Համբարձման տօնին պատրաստութիւնները կ'ընեն : Մին, բրիչին կրթնած, հրամաններ կու տայ միւսներուն . . . : « Բարեկամ, կը հարցընեմ, դուն պարտիզպանութիւն գիտե՞ս . . . : — Հեգնական քահքահ մը կ'արձակէ, եւ « Հապա դո՛ւն գիտես, միւսի՛ւ, իշտէ նայէ՛ ես պաղճը պանութեան խաղէթա պիլէ կ'առնեմ տէ՛ կը կարգամ պիլէ : » Ու ձեռքը շապիկին բացուածքէն ներս խօթելով, կը հանէ՝ ծալլուած, ճմաթկած ու աղտոտ, առանց կափարջի « Մասիս » մի, — մեր արդի շարաթութեթի Մասիսին մէկ թիւր, որուն վրայ ծաղկեկար դարդագիրներ կան . . . :

Կանանց հիւանդանոցին մէջ՝ ա'լ աւելի միօրինակ ու փայլուն են սրահներու մաքրութիւնն ու կազմածները : — Կանացի խոհատնիք հոգածութիւնն ու ուշքանքը , այդ ցաւերու եւ անկման միջավայրին մէջ անգամ , չեն վրիպիր դիտողին աչքէն : Անդին՝ խոխ մաշերով անխնամ զլուխներ , խորտ ու բորտ վերմակներ տեսանք մէկ քանի հատ — մինչ հոս անդամալոյծ կանայք անգամ կոկիկ եազուս ո'ր ունին , եւ միւսներն ալ սանտրած , հիւսուած մազերով , տեսակ մը coquetterieով նստած են կամ պառկած անկողիններուն մէջ... Առտուան դեղէն առաջ՝ չիք ու վայելուչ շինեօններ չինած երիտասարդ կիներու՝ տառնէ աւելի հանդպեցայ , որոնց մի քանին յիմարանոցին մէջ , զլուխն ու կուրծքերն ծաղիկներով ալ զարդարած էին :

Մասնաւոր սենեկի մէջ Հրէուհի մըն այկայ . Պոսոյ բոլոր Հիւանդանոցներէն մերը նախընտրած է . եւ աղէկցած ու մեկնելու վրայ :

Սենեակի մի մէջ , կը տեսնեմ հազիւ 18 տարեկան գեղանի աղջիկ մը , աղքատիկ հագուստներով , որ սաքի վրայ կեցած է , եւ ծրարիկ մը կայ անկողնոյն բարձիւ վրայ . « Կ'երթա՞ն այսօր , ալ աղէկ ես , այնպէս չէ՞ » կը հարցունէ բժիշկը : Աղջիկը , կտրմամբ , « Այո՛ » մը կը մոմօջէ , երբ սուր ու կրկնուած ընկղա՛յ , ընկղա՛յ մի կը հնչէ սենեկին մէջ Ծրարիկ-կապոցը՝ լաթափաթաթ նորածին երախայ մըն է , անխորձ աղջկան սիրոյ արկածին պտուղ , որ Հիւանդանոցին մէջ աշխարհ եկեր է , ու մկրտեր ալ են հոն : « Անունը ի՞նչ գրիք » — « Թիբեթաթ » կ'ըսէ Տաղաւարեան , անցեալները ուրիշ մըն այ ծնու հոս , անիկայ մանչ մըն էր եւ կոչեցինք « Միւսուա՛յ . . . » — Այս անունները ճաշակիւ չեն գար չառ , բլլան աւանդական ու նուիրակա՛ն իսկ Տքթ. Տաղաւարեանը իբրեւ կնքահայր մտրդու յանձնարարել չեմ կրնար... — Սակայն Մանկաբարձութեան ալ գործադրութիւնը կատարեալ է այսօր Հիւանդանոցին մէջ որ իբրեւ maternité դարձանատուն , կ'ընդունի անօք անկարող զոյր կիներ ու արհեստին ամէն խնամքներովն ազատած եւ առողջ կ'արձակէ զանոնք Որբուհիներ ալ կը տեսնենք . 150 հատ են , աղնիւ ու

աղնուական Հայ աղջկան մը՝ Օր. Բ. Զ. ի վերին հսկողութեամբ 3 վարժուհիներով , 3 դաստարան լեցուցած կը կարգան ու կ'աշխատին :

. . . — Կէս օր է . կ'երթամ մասնակցիլ Աղջին Տան սեղանին ուր բժիշկ սեղանակիցներուս կը յայտնեմ ապաւորութիւններու Հոն կ'իմանամ որ , օր առաջ , մեր Հիւանդանոցն այցելեր է Հայ-Հռոմէականաց Ս. Յակոբայ Անկեղանոցին վերապետուչ Հայր Սամանճեանը , եւ պտտելով , ուշադիր տեսնելով ու քննելով ամէն բան , յայտնել է իր դարմանքն ու հիացումը՝ սա բառերով . « Կը շնորհաւորեմ զձեզ ի սրտէ . չէնքերնիդ փառաւոր է , այսքան ընդարձակ եւ այսքան կանոնաւոր կերպով անօրինուած հաստատութիւն մը չէի կրնար երեւակայել երբեք . եւ կը խոստովանիմ որ ձեր Հիւանդանոցը գերազանց առաւելութիւններ ունի , ամէն տեսակէտով , մերինին վրայ : »


Աչալուրջ , բանգէտ ու զոհարեր Հոգաբարձութեան մը ձեռքին տակ , կարող ու պարտաճանաչ պաշտօնեաներէ վարուած — վառուած փարոս մըն է փրկարար Ս. Փրկչեան Հիւանդանոցն այսօր , առ որ կը զիմեն թըշուառութեան եւ ցաւոց ծովուն ալեկոծեալներն , եւ ապաստան , սփոփանք ու կեանք կը գտնեն հոն : Ահա անկեղծ ու խորին համոզումս :

ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Բերկրութեամբ կ'արձանագրենք , — ինչպէս հաղորդեցին արգէն ազգ . օրաթերթերը շաբթուս մէջ , — կայսերական այն շնորհը որուն համեմատ՝ վերջին երեք տարիներու զինուորական տրոց գումարէն պիտի գեղջուի ննջեցեալներու եւ բացականերու կամ գաղթածներու բաժինը , մէկ տարուան տուրքը ամբողջովին պիտի շնորհուի , եւ մնացեալ երկու տարուանն ալ չորս տարուան մէջ պիտի զանձուի : Ըստ այսմ , պէտք եղած հրամաններն հաղորդուած են այն նահանգներու կուսակալներուն որոնց կը վերաբերի կայս . սոյն բարեհաճ Իրատէն , որ միեւնոյն ժամանակ Դատական նախարարութեան կողմէ հաղորդուած է Ազգ. Պատրիարքարանին , Հայ-Հռոմէականաց Պատրիարքարանին եւ Բողոքականաց Ազգապետարանին :

Տ Գ Ե Ղ Ը



(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

« . . . Վերջերս առիթ ունեցայ կարդալու Հիւկլը Ռույի քրոնիկաձեւ շարք մը Սիրոյ խոստովանութիւնները :

Անանց խղճի խայթիս նորարծարծ տաղ-նապումը եղաւ ասիկա : Բոլորովին վրդով-ուած եմ այս օրերս . դառն յիշատակը կը յաճախէ իս՝ ուրուատեսիլի նման . ու կը տան-ջուրմ գաղտագողի :

Կինս ի գո՛ւր կը հարցափորձէ իս շուարե-ցընող խանդաղատանքով մը : Շատ դժուա-րութիւններ ունիմ սքօղելու համար կրծող գաղտնիքս :

Ճշմարիտ որ երջանկութիւնս վտանգուե-ցաւ յանկարծ : Ժամանակ մը քնացուցած էի խղճի խայթս՝ տրամաբանուած արդարացում-ներով , որոնք յաճախ խաբերայ եմ . ա՛խ , սոսկալի եղաւ սթափումը :

Բոլոր ջիւերս գրգռուած եմ . ցաւալի է փիճակս :

Ու , մտերմութեանց կարօտէն մղուած , կը փորձուիմ գէթ քեզի բանալ սիրտս : Արդեօք հոգիիս խօսող ուժով բաւ մը ունի՞ս :

* * *

Տարի մը , երբ դեռ ամուրի էի , օդափո-խութեան համար զիւղը ելած էինք :

Գիտես որ խանդոտ մըն էի միշտ — խան-դոտները որքա՛ն անգթօրէն զգայնիկ կ'ըլլան օր մը վերջապէս — եւ գուարթութեանց մէջ կը փնտռէի կեանքը : Ըմբռնումի խնդիր անշուշտ՝ եթէ ոչ կազմուածքի . ի՛նչ փոյթս որ շատեր թեթեւութեանս կը վերագրէին կենցաղիս ան-կանոնութիւնը :

Այն ատեն արդէն կէս-յափրացած մըն էի . բայց վարժութիւնը դիւրաւ չանհետիր . ուստի չէի կրնար համազուիլ թէ առանց քանի մը պղտիկ պատմութեան պիտի անցնի գիւ-ղագնացութիւնս :

Մի՛ հարցնէր թէ ի՛նչպէս սիրեցի հոն Գո-հարը , մեր դրացուհին՝ որուն ընտանիքին հետ էինք առտու իրիկուն :

Բայց արդեօք սիրեցի՞ ան :

Երբե՛ք :

Կ'երգնում քեզի որ բնաւ չի սիրեցի ան , ոչ իսկ բուպէ մը : Ի՛նչ կ'ըսես , եղբայր . մարդ՜ կրնա՞յ սիրել Գոհարը :

Պշօնէին մը , դեփ գեղին մազերով . ասոր ըսելիք չի կայ : Բայց գէ՛մք մը՝ որուն ար-տայայտութիւնը սէրէն զատ ամէն բան կը ներշնչէր :

Աշխարհիս էն տգեղ աչքերը . եւ միթէ ասիկա չի՞ բաւեր : Հապա բերա՞նք : Զէ , սիրելիս , չի սիրուելու բոլոր պայմանները մտրմնացած էին իր անժպիտ դիմագծ ութեանը մէջ :

Իր անունը իր իսկ հակապատկերն էր . եւ սակայն . . . : Կը շուարիմ՝ պարզապէս . պաղ քրտինք մը կու գայ վրաս . ուրկէ սկը-սիր չեմ գիտեր :

* * *

Քանի մը շարաթէն արդէն մտերիմ էինք Գոհարի ընտանիքին հետ : Հայրը խեղացի ու համակրելի անձ մըն էր . մայրն ալ տիպար մըն էր հին ազնուական բարեկրթութեան :

Յաճախ մէկտեղ պտոյտներ կ'ընէինք : Երբեմն ծառուղիին վրայ մինակ կը մնայինք . . . երկուքս՝ մերկները մէկ կողմ ուղղած ըլլա-լով իրենց քայլերը , ու դժբախտաբար կաս-կածի երթալու ո եւ է պատճառ մը չունենա-լով :

Իրողութիւնը ան է որ Գոհար զարգացեալ աղջիկ մը ըլլալուն , իր ընկերութիւնը աստի-ճան մը հաճելի կը թուէր ինծի :

Ադ կը հասկնամ : Բայց մտքէս կրնա՞ր անցնիլ . . . սէրը :

Իր համեմուտ խօսակցութիւնը , ազնիւ չարժուածքը ոչ միայն կը մոռցնէին ինծի պահ մը իր տգեղութիւնը . այլ նոյն իսկ կը թելադրուէի հետզհետէ կարեկցութեամբ իսկ վերաբերուիլ իրեն նկատմամբ :

Բնութիւնը , ա՛յնքան անարդար , զրկած էր ինքը , հէ՛ք աղջիկ , այն միակ շնորհէն՝ որ բոլոր ուրիշ յատկութիւնները գիտէ վեր հանել , որ պաշտելի կ'ընէ երիտասարդութիւնը , ու գեղեցկութիւնը :

Բան մը միայն կը պակսէր ուրեմն Գոհարին՝ առանց որու դատապարտուած էր յաւէտ չի ճանչնալու Վայելքը , սիրոյ ծաղիկը որ գեղեցիկ ճակատներու վրայ կը բողբոջէ . եւ այդ բանը ամէն բան էր իրեն համար :

Այսուհանդերձ աղբիւրները — միա՛կ միութարութիւն — բարերարատարար իրենց տխուր վիճակին գիտակցութիւնը չունին . անոր համար որ հայելիները գեղեցիկ ցոյց տալու համար միայն ստեղծուած են :

Ու Գոհար , յափշտակուած , կամաց կամաց կը կապուէր ինծի , կը փնտռէր հետքս , ազատ չէր ձգեր օծիքս :

Շատ չէի տեսներ անոր տաճած համակրութիւնը . ընդհակառակը , կը հրճուէի ատով ինքը գրեթէ երջանիկ տեսնելուս : Եւ այսպէս , անզգալաբար , աւա՛ղ , ասկիւարութիւնը ունեցայ քաջալերելու իր հիացումը , որ շատ շուտով փոխուեցաւ սիրոյ , խորունկ եւ անզուսպ սիրոյ :

* * *

Չի կրցայ մերժել ինքը , ըսել իրեն «Գնա քովէս» , չեմ՝ կրնար սիրել քեզ» . խօսք չէ աս . չի կրցայ :

Այն ատեն սէրը խաղաղութեանցաւ ինծի . վառուած լուցիկ մը՝ զոր թեթեւ շունչ մը կը մարէ : Ի՛նչ ոճիր :

Բայց առանց տենչանքի , առանց յոյսի , «կը սիրեմ» ըսե՛լ կնոջ մը՝ զոր ոչ միայն չէի սիրեր գոնէ վայրկեանի մը գիւթանքով , այլեւ բնաւ պիտի չի սիրէի :

Թեթեւութեամբ մը զոր լաւ չի կշռեցի , բոսի այդ խօսքը՝ կախարդութեան պատգամ , ինչպէս առաջ ըսած էի մարմնագեղ կնոջ՝ դեռ իմս չեղած , կամ՝ սրամիտ աղջկան՝ որ հետեւեալ օրը վրաս պիտի խնդար :

Ի՛նչ յիմար վայրկեան ան որ ինծի ճիւղաղային երեւցաւ վառելի քովէս կին մը , որուն սիրտը , թերեւս աւելի զգայուն եւ բարի քան էն գեղանուշ կնոջ սիրտը , կը բացուէր՝ յուսալից՝ առաջին սիրոյ հմայքին :

Բան մը չէի կորսնցներ , կը խորհրդածէի գուցէ , կեղծելով սիրել այդ աղջիկը , որ թերեւս իս սիրելուն մէջ պիտի վայելէր միակ երջանկութիւնը զոր կեանքը վերապահած ըլլար իրեն :

Յիշեցի , սարսաղով , Սիւլլի Բրիւտոմի Մեկնութիւններուն մէջ կարդացած ոտանաւորս — « Տգեղը » :

Յորմենտե տանջեց իս ձեւ մը դիւքաւետ ,
Ցաւքս քեզի մօտ բուժելու ունիմ՝ բաղձանք .
Գուն՝ սիրազեղ , որ սիրունի չեղար յաւետ ,
Հրեշտակ որ հոգի մ'իս լոկ անտառապանք ,
Ինքն ղեռ շատ մատղաղ եմ որ քեզ սիրեմ ցանգ :

Իմ տեղս ուրիշ մը պիտի զլանա՞ր անոր սիրելու իրաւունքը , քանի որ առանց ատոր կրնար աշխարհիս էն դժբախտ էակը դառնալ , պիտի խնայե՞ր իրմէ կարեկցութենէ խրախուսուած գգուանքներ , իրեն համար գուցէ սիրոյ փոխադարձ զգացումներ , որոնք բաւ էին երջանիկ ընելու ինքը :

* * *

Միեւնոյն օրը որ ճանչցայ իր մօրաքրոջ աղջիկը , դեռ նոր ամուսնացած դիւրահաղորդ կին մը , որ իրենց տունը հիւր եկած էր քանի մը շաբաթուան համար , գերմարդկային ջանքեր ըրի չի մատնելու համար սիրտս , որուն մէջ այլեւս նողկանքի պէս զգացում մը կը ծաւալէր իրեն դէմ :

Ամառ մը ամբողջ զոհե՛լ Գոհարին , առանց իրական հաճոյքի , առանց նոր սիրավէպ մը արձանագրելու սրտիս յուշատետրին մէջ , ասիկա ահագին դժբախտութիւն մըն էր ինծի համար :

Ա՛լ պարտքս կատարած համարեցի . ու գեցի վերջակէտ մը՝ դնել ծիծաղելի զաւեշտին : Ու հիմակ կարգը իմս էր :

Ուստի այդ սիրուն հիւրը տեսած վայրկեանիս , առաջին երազս եղաւ իր համակրանքին արժանանալ . եւ բիւքնիքի օր մը ա՛յնքան զուարթօրէն դարպասեցի սիրոյ համար ստեղծուած այդ քնքուշ էակը որ Գոհարին աչքերը արցունք կտորած էին :

Պահ մը թեւէս բռնեց ու ծառի մը տակ տանելով՝

— Ըրածդ վատութիւն է . . . բացադանա-

չեց երեսս ի վեր այնպիսի յուսահատ շեշտով մը որ աւելի զգուանքով փախայ ձեռքէն . խելքս արդէն գլխէս թռած էր ու փութացի նորէն թռչեալս քով , ինչպէս որ կը յորջորջէի ինքը :

Ի՞նչ ընէի . կրնայի ամբողջ կեանքս զոհել այդ ինքնակամ սիրուհիին . «դեռ չատ երթ տասարդ էի ան սիրելու համար » : Ան իր ճամբան կ'երթար . ես ալ իմն ունէի հետեւելիք :

Հետեւեալ օրը ահռելի տեսարան մը : Գուհար խենդ դարձեր էր . բերնէն ելածը չէր գիտեր . կարծածէս չատ աւելի լրջօրէն ու խորապէս կը սիրէ եղբւր : Նախանձը եւ զայրոյթը կը բազմապատկէին իր տգեղութիւնը :

Ձայն չի հանեցի , լռիկ մնջիկ քաշուեցայ — Վա՛տ , գոչեց ետեւէս :

Ու այդ բառը , անէծքի մը պէս պահուած սրտիս մէկ անկիւնը , այսօր կ'արձագանգուի՝ անվրիպելի սպառնալիքի մը տաժանքով :

Քանի մը օր վերջ , ինչ ըրի չըրի , գիւղէն իջանք :

Եւ մէյ մըն ալ չի տեսայ Գուհարը : Ատեն մը չատ հետաքրքիր էի իր լուրերը առնելու համար . մեր բաժանուածն տարի մը վերջ եւրոպա հաստատուած մօրեղբորը քով գացած էր՝ մասնագիտութիւն մը սորվելու համար :

Ու ալ բան մը չիմացայ յետոյ այդ հէք աղջկան սեւ ճակատագրին վրայ :

Այս պարագաներուն մէջ յանցաւոր եմ . ի՞նչպէս կրնամ արդարանալ : Հանդարտեցո՛ւր խիղճս , սրով հետեւ դառնօրէն կը տա . ապա իմ Գուհարին վրայ մտածելով :

* * *

Բարեկամիս նամակը ձեռքէս ինկաւ ինքնին :

Քանի մը վայրկեան աչքերս յառած մնացին վառարանին կարմրափայլ թափանցիկ ստուռահանիկներուն վրայ , Գուհարին , միշտ սիրող ու երբեք սիրուհի՝ տգեղ կնոջ սիրտն է կարծես որ կ'արիւնի :

Անհուն հիացմունք մը դէպ ի լոյսը տգեղ կիները , որոնք այնքան քիչ կը սիրուին ու չարչարուելու համար միայն կը սիրեն , տղու պէս կը լացնէ իս :

Պիտի ուզէի , միամիտ խոստովանութիւն , սիրել այդ զրկուածները , անխորի , ամէնքն ալ գեղեցկացնելով խորունկ սիրոյ մը ցուցումին մէջ , սիրել՝ անոնց երջանկութեանը համար , զոհելով իմս՝ համակերպութեամբ մը որ գունաթափ կ'ընէ կեանքին վարդը :

Վսե՛մ երազ , անանկ չէ՞ . գուցէ բանաստեղծի զառանցանք :

Բայց , ըսէք , ի՞նչ պատասխան տամ բարեկամիս :

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋԵԱՆ

ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Այս վերնագիրը ինքնին հրապուրիչ չէ . բայց լաւագոյնը չը կրցայ յարմարցնել յետագայ խորհրդածութիւններու :

Վիճակագրական ծանօթութիւններ չունիմ ձեռքս , հաստատուելու համար թէ մեր ազգին մէջ ամուսնութիւնները ստուգիւ փափաքուած թուով կը համարուին թէ ոչ : Բայց այս բնարանին վրայ հիստուած զանազան տեսութիւններ երբեմն կ'երեւան լրագիրներուն մէջ . Ամէն մարդ իր ըմբռնումին համեմատ բան մը կ'ըսէ . մէկը կը գոհանայ միայն

հարցում մը պատրաստելով՝ թէ ի՞նչ միջոցներ հարկ է ամուսնութիւնները դիւրաւ իրականալի ընելու համար : Ուրիշ մը մեր կեանքին արդի պէտքերը արդէն բաւական նախական ու պարզ կը գտնէ եւ աւելի պարզելուն մէջ խրախուսական միջոց մը չի տեսներ : Երրորդ մը այս կարծիքին բոլորովին հակառակը կը պնդէ . այս վերջնոյն համար ամէն բան չափազանցեալ է , ամեն բան բազմաթիւ : Իսկ կատարելապէս լաւատեսն ալ ընկերական արդի կազմակերպութեան մէջ

համեստ եւ կանոնաւոր կեանքով մի կարեւոր ապրելու համար այնքան վհատեցուցիչ բան մը չի նշմարեր :

Տարօրինակ չպիտի երեւայ անշուշտ եթէ ես ալ իմ կարծիքս յայտնեմ : Բայց չեմ գիտեր թէ այս առարկութիւններէն ճշմարտագոյնը ո՞րն է :

Ուստի մեկնութիւն մը կը փնտռեմ որ գոհացնէ ամէն հարցում, դարմանէ ամէն պէտք եւ բացատրէ ամէն ինչ : Այսպիսի մեկնութիւն մը շիտակը դիւրին գտնուելիք բան չէ այս կարգի կեանքոտ խնդրոյ մը մէջ — արդի ամուսնութիւնները — ուր ամէնէն աւելի անհրաժեշտ է իրար հասկնալը :

Ամէն համաձայնութիւն իրար հասկընալէ առաջ կուգայ, կըսէ գաղղիական առածը : Վախճալով ուրեմն որ չըլլայ թէ ընթերցողիս եւ իմ մէջ ալ անհամաձայնութիւն ծագի՝ զիրար չը հասկընալու հետեւանքով, բացարձակապէս կը յայտարարեմ թէ նպատակս ամէն բան բացատրել չէ — ինչ որ յաւանութիւն պիտի ըլլար — այլ պարզապէս մեկնութիւն մը փորձել :

Սովորական պայմաններուն մէջ, որ կը հաւատարի ոչ-կատարեալ դատարարականութեան մը վիճակին, ամէն այդ կամ աղջիկ, ամուսնանալ որոշելէ առաջ ինքզինքին կը հարցնէ. «Եթէ չկարենամ ապրիլ :» Եւ միւսը. «Եթէ չկարենամ հագուիլ :» Այս կարգի մտաւորութիւնները գլխաւոր արգելքներ են ամուսնութեանց բազմապատկուելուն եւ կը ծնին, անտարակոյս, անկատար դատարարականութենէ : Թերի դատարարականութիւնը յաճախ չի տեսնուիր կուտայ կեանքի պայմանները սիրոյն եւ շահուն հետ : Եւ կամ կեանքը սիրոյն եւ սէրն ալ շահուն մէջ կ'որոնէ :

Կեանք, շահ եւ սէր . առանց նկատմամբ իւրաքանչիւր ոք ինչ գաղափար որ ունի կը պարտի գոյն՝ նախ իր բնութեան խառնուածքին, բայց յաճախ ալ իր մտաւոր զարգացման եւ ընդունած դատարարականութեան աւելի կամ նոսր կատարելութեան :

Այս երեք գաղափարները իրարու հետ այնքան սերտ անջոյթիւն ունին որքան թթուածինը, բորակածինը եւ ածխածինը օդին մէջ : Եւ առանց չափազանցութեան կա-

րելի է ըսել թէ առանց կեանքի՝ ո՛չ շահ կայ ո՛չ սէր . առանց շահու՝ ո՛չ սէր կայ ո՛չ կեանք . եւ առանց սիրոյ՝ ո՛չ կեանք եւ ո՛չ շահ : Թէ ի՞նչ է առանձինն կեանքը, շահը եւ սէրը . ասոնք ալ ուրիշ մեկնութիւններ են զորս յաջորդարար պիտի տեսնենք :

Առաջին պարբերութիւնը բացատրութեան կարօտ չէ : Կեանք չեղած տեղը խօսելիք բան միմիայն յաւիտենականութիւնը կը մնայ, որուն մեկնութիւնն ալ իրեն պէս երկայն ըլլալու է . ուստի անցնինք :

Երկրորդ պարագան, եթէ երբեք բացարձակ ճշմարտութիւն մըն ալ չէ, ճշմարտանքման երեւոյթ ունի : Արդարեւ՝ առանց շահու սիրոյ օրինակները — զոր պէտք չէ շփոթել անձնութեան եւ պարտուց կատարման պարագաներուն հետ — Թոմէս եւ Ժիլիէրի կամ Հէւման եւ Տոսթէի նման հերոսներու մէջ կը մարմնաւորուին : Շահէ դուրս՝ սիրով միայն կատարուած ամուսնութիւնները բարեբաղդարար սակաւամիւս են եւ ընդհանրապէս կրնան դառնալ անխորհուրդ ձեռնարկութեանց կարգը : Կրնայ հետեւաբար ըսուիլ, չափազանցութենէ զգուշանալով, թէ իր շահը չի ճանչցող կամ լաւ չ'ըմբռնող մանչ կամ աղջիկ ամուսնական սիրոյ վրայ այնքան գաղափար կ'ունենայ որքան կեանքի մնացեալ մէկէ աւելի պայմաններուն վրայ :

Առանց շահու սիրահարները idéaliste դարձնին կը պատկանին եւ նշանարանին կը համապատասխանէ «խրճիթ մը եւ քու սիրտը» ասացուածքին : Խնամա խրճիթ մը, ինչպէս կ'ըմբռնուի արդէն ամէն խրճիթ, առանց չոր հացի պատասխի մը . . . քիչ մը տարօրինակ գաղափարական : Սէրը, այս պարագային, ինչպէս գրեթէ ընդհանրապէս, սրբափն շահագործումը կ'ըլլայ երեւակայութեան միջոցաւ :

Երրորդ պարբերութեան մեկնութիւնը շատ դժուար չէ : Ստուգիլ՝ առանց սիրոյ ոչինչ կայ . քանի որ ամէնէն աւելի վայրագ հաճոյական տարները եւ շահամոլները առանց սիրելու չեն կրնար ապրիլ : Սէրը անոնց կեանքին ալ ուղղեցոյցն է . սէր մը որ, իր տեսակին մէջ, անոնց անձէն ուրիշին չանցնիր :

Ներքեի է այս վերջին մեկնութիւնը նկատել քիչ մը չափազանցուած . բայց քանի որ մարդկային ամէն գործունէութիւն պարտի ունենալ կեանքէ եւ չափէ դուրս անչափաէր նպատակ մըն ալ , այդ նպատակը կը փնտռէ իր լաւագոյն գոհացումը սիրոյ մէջ , ըլլայ անձինք կամ օտարինը :

Ընկերական միջավայրի մը տուած դատարակութիւնը կրնայ այս կերպով ամենուլու , կամ բաւական կատարեալ նկատուիլ երբ այդ հասարակութեան իւրաքանչիւր անհատը մտքովը համոզուած է եւ սրտովը կը զգայ թէ յառաջագէտ՝ կազմակերպութիւն մը պէտք չունի ո՛չ կեանքի մասնագէտի , ո՛չ սիրոյ մասնագէտի եւ ոչ ալ շահու մասնագէտի , այլ այնպիսի մասնագէտներու որոնք — բնականեկան բարօրութեան եւ զարգացման տեսակէտով — միացնեն իրենց մէջ՝ գործունէու-

թեան կորովին հետ , ինչքի մատակարարութեան կարողութիւնը եւ յարաբերական երջանկութեան մը գաղտնիքը :

Հակառակ այս ամէնուն՝ եթէ երբեք հարցնէիր , դարձեալ , ընթերցող , թէ չամուսնացած ի՞նչ բան առաջ համրել պէտք է . զրպանին զրա՞մը թէ սրտին բարասումները , կամ թէ սէ՞ր շնչելը լաւագոյն է քան փող հնչեցնելը , պիտի պատասխանէի .

— Շիտակը խօսելով , քեզի չափ ես ալ չուարած եմ :

Եթէ կրցար կեանքիդ փորձասութեամբը մտքիդ յարմար փիլիսոփայութեան մը հետեւիլ՝ խրատի պէտք չունիս :

Եթէ չես կրցած՝ ինչ որ ըսեմ անօգուտ է : Ներշնչմանդ համեմատ գործելէ զատ ուրիշ միջոց չունիս :

ԱՐՄԻՆԷ

Կ Ա Ր Օ Տ Ն Ե Ր Ս

Հոգուս խորը կարօտներ կան
Որ կը քանդեն զիս օրէ օր,
Ինչպէս բոցի կարմիր լեզուն՝
Մոմին ճերմակ մարմինն աղուոր :

Կարօտներ կան խորը մըտքիս,
Որ անդադրում զայն կը փորեն :
Լնւ , քնք է վերջն իմ ցաւերուն,
— Լուս՝ կը խորհիմ ես ինքիքին :


Ու կը լայննայ վերքը տակաւ
Ձը դարմանուած կարօտներուն .
Ո՛չ ոք գիտէ զանոնք , աւանդ,
Ես դազաղն եմ այդ ցաւերուն :

Ձրնջին ցաւեր , — Է , ո՞վ գիտէ .
Գաղտնիքներն են անոնք հոգուս .
Երազանքներ , խորհուրդներ վառ՝
Կը մարին խորն այդ ցաւերուս :

Ու կարօտներն իմ մենամոյ
Կը սպառեն զիս՝ միեւն ցման ,
Ինչպէս բոցի կարմիր լեզուն՝
Մոմին մաքուր մարմինն աղուոր :

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ



Պարտէզի մը մէջ ու հովանուտ անկիւն մը չէր, ո՛չ ալ գեղածիծաղ կիրակի առտու մը, որ հանդիպեցայ Յովհաննէս Գաղանձեանին, — ինքն ալ նորեկ մը, Հ Երեմեանին պէս, ու անունովը միայն ծանօթ մեզի: Լուր օրուան մը միջօրէին, հրատապ արեւով մը. Չաքմաքճու լարի վերելքը կատարել հարկ եղաւ, փոխադարձ այցելութիւն մը տալու համար աշխատակից-բարեկամութեամբ, Մէրճանի կողմը, մեր հին գրաւաճառներուն ու հին պոետորականներուն մոռցուած շուկան: Զէ՞ մի որ Գաղանձեանն ալ, գիրքի մարդու եւ գործի մարդու կրկնակ յատկութիւնները կը միացնէր իր անձին վրայ, ինչպէս գաղափար կազմած էինք հեռուէն իր մասին: Իր միջավայրին մէջ էր ուրիշն հոն — համեստ, անշուք միջավայր, զոր այդ գաւառացի գրագէտը նախամեծար պիտի սեպէր Բերայի գոհուրոհէն կամ Վոսիորի ծովկեղերեայ գիւղերէն: Խանի մը մթին անկիւնը բնակիլ, հեռու այն արուարձաններէն ուր կարելի է հաղորդակցութեան մէջ գլուխով մտքի աշխատանքներուն, — Պոլսեցի գրագէտներուն, հրապարակագիրներուն, ուսուցիչներուն հետ, — տխուր բան մը ունենալու է իր մէջ. տեսակ մը պատրանք: Ու կերեակայեմ որ եթէ գաւառէ մը, տասր տարի շարունակ՝ Գաղանձեանին պէս՝ աշխատակցած բլլայի Պոլսոյ ազգ. թերթերուն, բանասիրական յօդուածներով, ուսումնասիրութիւններով, որոնք գնահատուէին գրասէրներէն, ու օրին մէկը, մայրաքաղաք գալուս, ո՛չ մէկը գտնէի շուրջս անոնցմէ որոնք այնքան սիրալիր ու քաջալերական նամակներ ուղղած էին ինծի, գառնութիւն մը պիտի զգայի որուն հաւատարող հոգեկան վիճակ քիչ կը գտնուի: Եւ սակայն, ի՛նչ անշուք համակերպողներ են անոնք այս տեսակ յուսադարձութիւններու, ինչպէս Յովհաննէս Գաղանձեան, ինքն ալ, որուն գրուածքները սակայն, կարեւոր ու անանձնայատուկ տեղ մը գրաւած են միշտ հայ մամուլին մէջ:

Երկու բառով զինքը յատկանշելու հա-

մար, պիտի ըսեմ թէ «վաճառականի գրագիր» հանգամանքը — որ մեր կարգ մը երիտասարդներուն ջիգերը թունդ կը հանէ, չես գիտեր ինչու — իրեն համար սիրելի ասպարէզ մըն է իրրեւ գործնական կեանքի պայմաններէն մէկը, ինչպէս սիրելի է իրեն գրականութիւնը որով կը զրադի իրրեւ amateur: Բայց amateur մը որուն հմտութիւնը ու խղճմտութիւնը արուած չէ՝ գրականութիւնը իրրեւ ասպարէզ նկատողներէն չատերուն:

Լեզուարանական, քերականական ո՛ր եւ է հարցի վրայ լեզուարանի մը ու քերականի մը բոլոր մթերքը ամրաբաժ իր մտքին մէջ, գտնելու, գնահատելու, սրբագրելու ամէն ձեռնհասութիւն ունի այս գաւառացի երիտասարդը. իրեն պակասածը . . . յաւակնուտութիւնն է միայն: Եւ երբ զինքը կը բաղդատեմ, մաքիս մէջ, այն կարգ մը գրիչ շարժել փորձողներուն հետ որոնք անքն ձախէն վճիւր կարճակեն խելքերին չը հասած նիւթերու վրայ իսկ, անկեղծ սքանչացում մը կունենամ Գաղանձեանին եւ անոր նմաններուն նկատմամբ զորս դժբաղդարար քիչ անգամ տեսնելու առիթը կունենանք մէջերնիս:

* * *

1900ի Ընդարձակ Օրացոյցը՝ ուրիշ տարիներէ աւելի նիւթական չահ մը հանելէ զատ Հիւանդանոցին, բարոյական ծառայութիւն մը կը մատուցանէ, մէկ կողմէն՝ մեռած ծանօթ անձնաւորութեանց, — արուեստագէտ, գրագէտ, եկեղեցական, բարեգործ եւ այլն, — յիշատակին, արձանագրելով անոնց ծննդեան, մահուան ու գլխաւոր գործերուն կատարման թուականները, ու միւս կողմէն՝ լրագրութեան որուն ղիւրութիւն կուտայ օրը օրին աչքի առջեւ ունենալ զանոնք: Այսպէս, երբ անցեալ չարաթ օր մասնաւոր յօդուածով մը՝ Մաքիսի մէջ կը վերկենդանացնէինք Ղուկաս Պաղագարեանին յիշատակը, Սուրհանդակ ալ նոյն բանը կընէր Յակոբ Պարոնեանին համար, հրատարակելով

նաեւ ողբացեալ երգիծարանին պատկերը :
Ու եօթնեակը չրոլորած , կը գտնենք ուրիշ
ոչ նուազ սիրելի անուանի մը յիշատակը այդ
մեռելական ժամանակագրութեան մէջ :

Յունիս 3 — 1891 . Մահ նշանաւոր գերասան եւ
բանաստեղծ Պետրոս Աղամեանին որ 1849ին ծնած էր
Էնկիրիի մէջ :

Ու միտքս կը բերեմ , տապանաքարի մը
պէս խորագրեցիկ այս երկաթը կարգացած
պահուս . ինք տարի առաջուան այն յունիս
Յի օրը . երբ գոյժը հասաւ յանկարծ թէ
« Աղամեանը մեռեր է » : Անակնկալ մահուան
մը լուրին ցնցող ազդեցութիւնը չունեցաւ ա-
նիկա , վասնզի շարաթներ առաջ « պատրաս-
տուած էինք » լսելու վախճանը տաղանդա-
ւոր ողբերգոյն որուն օրերը համրուած էին ,
բայց զգացինք անհուն ցաւ մը՝ հայ գերա-
սանութեան համար տեսնելով ահագին տն-
ջրագետի մը բացուիլը — այդ ծիրած , վախճ-
մարմնին անհետանալովը — որ ա՛լ չպիտի
գոցուէր բնաւ : Ու կը յիշեմ՝ նաեւ , այս
մահուան տարեդարձին հետ , վերջին այցե-
լութիւնը զոր տուի Աղամեանին , իր մահէն
քանի մը ամիս առաջ , փետրվարի մէջ , Բանկալ-
թիի սուսական հիւանդանոցը , ուր զիս կան-
խած էր նոյն ատոտն Արիստլան , բանաս-
տեղծ-գերասանին յարեկամը , այցելութեանց
յատուկ ժամէն կանուխ . ու չի կրնալով վեր-
ելլել , քառթին վրայ գրած էր քառեակ մը

Կուրծք տալով հովին , ձիւնին յորդանոս
Զքեզ տեսնելու եկայ մինչեւ հոս ,
Սակայն դռնապանն , անգուր , անբզգամ ,
Վանեց զիս — Վաղը նորէն պիտի գամ :

որ ժպիտ մը բերաւ մահամերձ արուեստա-
գէտին գեղնած այտերուն վրայ :

Աղամեան , ինքն ալ , քառեակ մը գրեց
այն օրը — վասնզի , խաչափողին բարբառու-
մէն՝ խօսիլը արգիլուած էր իրեն — ու գրով
կը տեսակցէր իր այցելուներուն հետ : Իրեն
պէս առգիտը մը հասարակ բան մը չպիտի
կրնար գրել բարեկամ օրագրողի մը կարկա-
ռելու համար . ու իր ծիւրած եւ մարեղու
մօտ կեանքին պատկերը ամփոփեց քանի մը
տողերու մէջ կապար գրիչով , դողքով մատ-

նելով գրուած , որուն մէջ ինքզինքը կը
նմանցնէր խորիւրդած փոթորիկներէն մաշուած
նաւակի մը զոր ծովեզրը քաշած ձգած են եւ
զուր ջանքեր կ'ընեն նորոգելու համար . . . :

* * *

Տխուր բան է , սակայն , մեռածներով
զբաղիլ շարունակ , որքան ալ սիրելի անու-
նեք թողած ըլլան անոնք . գէթ այսպէս մտա-
ծեն թերեւս ընթերցողներէն չափեր . ասոր
համար է որ , հակիրճ վերջու շուտով մը կը շա-
տանամ՝ վերագոռնալու համար կենդանինե-
րուն , յաջողածներուն ու նորածագ տաղանդ-
ներուն , զարնան այս աղուոր օրերուն մէջ
մանաւանդ ուր կեանք եւ ոգեւորութիւն կը
բուրէ ամէն բան բնութեան մէջ :

Բարիզէն է որ կը հասնին , այս միջոցիս ,
յաջողածներու յուրերը . Էսկառ Շահինը սկի
միտալ մը կը ստանայ իր ցուցադրած նրար-
ուեստ փորագրութիւններուն համար . Կեդ-
րոնականի երկու նախկին սաներ , Արտաշէս
Նետուրեան եւ Խաչիկ Սարգիսեան , երկրա-
չափի վկայական կը ստանան « Էքզո տէ բօն'դ
է շօն » էն — ինչ որ պղտիկ բան չէ օտարա-
կաններու համար : Յամառ աշխատութիւնով
ձեռք բերուած այս յաջողութիւններուն մէջ-
տեղ , կը յիշուի անուն մըն ալ զոր տանօք
արձանագրած ե'ր Արեւելիի մէջ , այն տարի-
ներու հաղթանակ խանդավառութեամբ « տաղաղայ
Աղամեան » յորջորջելով : Յիշողներ ըլլան
թերեւս թէ Արմէն Իփէքեանին համար էր ,
որ կիսատ մնացած ու աստանդական քանի
մը փորձերէ հաքը , մոռցուց ինքզինքը : Հի-
մայ , կը կարգամ Բիւրակի « Հասկաքաղ » ին
մէջ , թէ այս գեռարոյս երիտասարդը Սաա
Պէռնարին աշակերտելու գացեր է , յանձն
տանելով 7 տարի անընդհատ հետեւիլ մեծա-
նուն գերասանուհիին դասերուն ու հրահանգ-
ներուն : Իր վերջին փորձն է անչուչա ասի-
կայ , գերագոյն փորձը , որուն համար յաջո-
ղութիւն մաղթելէ աւելի . . . յարատեւու-
թիւն մաղթելու է , — ինչ որ ինքնին ար-
ժանիք մը պիտի ըլլայ արդէն :

ՏԻՓԲԱՆ ԱՐՓԵԱՐԵԱՆ

ԿԵՍ-ԲԺՇԿԱԿԱՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀԻ ԽՆԴԻՐԸ

Հին ժամանակներէ սկսեալ, մարդիկ միշտ մասնաւոր ուշադրութեան եւ հոգատար խնամքի առարկայ ըրած են պատերազմի դաշտին վրայ վիրաւորուածներուն վիճակը . եւ միշտ քանակաւ են այդ կարգի տառապողներուն պէտքերը հոգալ, ինչքան որ կը ներէին իրենց միջոցները . Իրաւ է սակայն թէ հին ատենները, երբեք հաւաքական կանոնաւոր ձեւերով չեն եղած բնդհանուր հիւանդները խնամելու եւ անոնց բնդհանուր բարեշուութեան վրայ հսկելու համար :

Կը հանդիպինք նշանաւոր անուններու, որոնք իրբեւ տիպար մարդասէրներ մաքաւեցան գերեզմանութեան դէմ . կրնանք դարձեալ յիշել ուրիշ մարդասէրներ, որոնք ամէն բան ըրին ինկածները վերցնելու եւ անբարոյ յուլիւնը արմատախիւ ընելու համար : Երկար ատեն սակայն վիրաւորներն ու հիւանդները չունեցան իրենց անոյեանը : Պատերազմի դաշտին վրայ ինկած զինուորները ինչպէս նաեւ տուներու մէջ չարչրկուող հիւանդները բոլորովին զուրկ էին այն խնամքէն, որուն այսօր կ'արժանանան այդպիսիները՝ հիւանդապահութեան շնորհիւ :

Արդի հիւանդապահութեան ծնունդ տուին պատերազմը եւ մարդասիրութեան ոգին, որոնք ինչպէս արդէն տեսնուեցաւ՝ տարբեր կերպերով սկսած էին գործել : Եւրոպայ՝ մեծն Նապոլէոնի դէմ մղած ահաւոր պատերազմին քանի մը գերմանացի կիներ կ'որոշեն անձամբ երթալ ու խնամել պատերազմի դաշտին վրայ վիրաւորուած իրենց ամուսինները կամ եղբայրները, եւ տղրիներ վերջը, այս պարագայէն թեկադրուած՝ կանոնաւոր հիւանդապահութեան հիմը դրուեցաւ Գերմանիոյ մէջ, 1816ին, անգլիացի ծանօթ բանաստեղծ Սաութհի այցելութիւն մը կու տայ Ուալթերլայի արիւնեաների դաշտին եւ խորապէս զգածուելով կոչում կ'ընէ իր սղգակիցներուն՝ ուշադրութիւն դարձնել հիւանդանոցներուն մէջ

տառապողներուն, որոնք թէեւ կը վայելէին բժշկական հարկ եղած դարմանները, սակայն զուրկ էին հիւանդապահական խնամքէ :

Հիւանդապահութեան բուն սխառմական գործադրութիւնը սկսած է սակայն գերմանական պզտիկ գիւղի մը մէջ, Քայզերսլէյթ անունով : Այդ փոքրիկ գիւղին բողոքական ժողովուրդին երէցը եւ երէցիկներ 1836ին կը բանան ուսումնարան մը «Սարկաւագուհիներու Հաստատութիւն» անունին տակ, եւ իրենք՝ անձամբ կը հսկեն Հաստատութեան վրայ ու կը կրթեն իրենց աշակերտող կիներու փոքրաթիւ խումբը : Այս հիւանդապահութիւնները մասնաւոր ուստ մը չէին ըներ . հասկըցուած բան մըն էր սակայն որ հիւանդապահութեան հետ Սրբ. Գրքի ծանօթութիւն ալ ունենալու էին . եւ տարակոյս չկայ որ իրենց պաշտօնին ըմբռնումը քիչ ու շատ ձեւաւոր էր նախկին եկեղեցիին մէջ յիշուած դրութեան վրայ (*) :

Եւ գերմանական այդ աննշան գիւղը եղաւ կեդրոնը, ուսկից աշխարհի չորս կողմերը տարածուեցաւ հիւանդապահ կիներ հասցնելու եւ պահելու մեծ գաղափարը, որուն ներկայ ժամանակիս զարգացած բժշկութիւնը եւ վիրահատութիւնը կը պարտին իրենց յաջողութեան կարեւոր մէկ բաժինը :

Պատերազմը դարձեալ տուաւ յաջորդ եւ Անգլիոյ մասին առաջին՝ մեծ զարկը : 3,000 զինուորներ մեռած են Խրիմի պատերազմին՝ իրենց ստացած վէրքերէն, բայց ատոր վեց անգամը աւելի զինուորներ մեռած են այլեւայլ հիւանդութիւններէ, որոնց առաջնէ կարելի էր հիւանդապահական միջոցներով : Այս պարագան մեծ ցնցում առաջ բերաւ Անգլիոյ մէջ, եւ 1854 հոկտեմբերին Միսնայթի ինկէլ դէպքի պատերազմի դաշտը կ'ու-

(*) Հոգմայեցող ժժ զլիւն առաջին համարին մէջ սպասաւոր բաղը գործածուած է անտարակոյս հիւանդապահ քոյրերուն համար :

ղեւորի, հետք առնելով երեսունընեօթը հիւանդապահուհիներ: Երկու տարի վերջը հայրենիք կը վերադառնան ասոնք, իրենց հետ բերելով ո՛չ միայն Անգլիոյ, այլ պատերազմիկ ամէն կողմերու յարգանքն ու համակրանքը: Անգլիական օգլը՝ զործնականապէս վարձատրելու համար այդ քաջարի ու մարդասէր կիներ, ժողովրդային հանգանակութեամբ ահագին գումար մը հանգանակելով անոր կը նուիրէ, ինչ որ սակայն Միս' Նայթինկէլ ամբողջովին կը յատկացնէ՝ հիւանդապահ կիներ պատրաստելու սահմանուած նորահաստատ դպրոցի մը: Այս կիներ եղած է Մեծն Բրիտանիոյ մէջ հիւանդապահութիւնը կանոնաւոր ընթացքի մէջ մտցնողը: Անոր 80րդ տարեդարձը փառաւորապէս տօնեցին դեռ քանի մը օր առաջ:

* * *

Այս քիչ մը պատմական նօթերուս ասիմ տուաւ Բերայի Աղքատախնամին հիւանդապահութեան դասընթացքի ծանուցումը, որ տեսնուեցաւ ազգ. թերթերու մէջ: Եւ հիմայ թերեւս ներելի ըլլայ քիչ մըն ալ խօսիլ մանաւորաբար մեր հիւանդապահացուներուն:

Աղքատախնամին հրատարակած յայտագիրը խիստ գործնական կը գտնեմ, — նախ տեսական դասընթացք մը եւ ապա գործնական վարժութիւն Ազգ. Հիւանդանոցին մէջ: Ուրիշ առթիւ մը այդ կերպը յանձնարարած եմ արդէն, իրրեւ միակ կերպը որ կրնայ յաջողիլ:

Աշխարհի է՛ն քաղաքակիրթ երկիրներէն՝ Անգլիան կրնամ հոս օրինակ բերել համոզելու համար մեր հիւանդապահացուները թէ հիւանդապահութիւնը ի՛նչքան բարձր արհեստ մը եւ պատուաւոր զբաղում մը կը սեպուի հոն: Ատենօք հիւանդապահ կը սեպուէր ով որ «բան քաջած» էր, եւ իր անձնական փորձառութիւնէն օգտուելով (!) կը խնամէր հիւանդները: Հարկ չկայ ըսել թէ այդ կերպ հիւանդապահութիւնը այլեւս հին պատմութեան չըջանին միայն կրնայ պատկանիլ ներկայ ժամանակիս մէջ՝ հիւանդապահէն կը պահանջուի սիրտ եւ ուղեղ միանգամայն, կամ ըսենք՝ փափկասրտութիւն եւ իմաստութիւն:

Արհամարհելի արհեստ մը չէ՛ երբեք այս հիւանդապահութիւնը: Հիւանդապահը աջ բազուկն է բժշկին. եւ շատ հեղ ալ հիւանդապահ է կին մը իր սեռին յատուկ փափկութեամբը այր-բիժշկէն աւելին կրնայ ընել, միշտ պահելով հարկաւ իր շափը:


Անանկ եղած է որ մեր մէջ, հիւանդապահութիւնը (այսինքն եթէ երբեք ատանկ բան մը ունինք) ծեր, զաւառամած մարապետներու վերապահուած բան մը նկատուած է: Մեր մէջ այս գաղափարը մտցուած է անչուշտ Ֆրանսական կամ գերմանական երկիրներէն: Անգլիոյ եւ Ամերիկայի հիւանդանոցներուն մէջ սակայն ատանկ չէ: Այս երկիրներու հիւանդանոցներուն մէջ, ինչպէս նաեւ դուրսը գտնուող բոլոր հիւանդապահները առհասարակ շէնք-շնորհք կիներ ու աղջիկներ են, որոնք հիւանդապահութիւն կը սովորին իրրեւ ազատ արհեստ մը:

Ատենն է որ մենք ալ հասկնանք թէ վարժուհի, դերձակուհի, սպասուհի ըլլալէն անհունապէս բարձր բան մի՛ն է հիւանդապահ ըլլալը: Եւ պէ՛տք է արդեօք ըսել թէ շահող արհեստ մըն ալ է միանգամայն: Լսեք եմ թէ Անգլիոյ ոստանին մէջ հիւանդապահութիւն սորված հայ օրիորդ մը շատ նախանձելի զիրք մը գրաւած է այսօր Պոլսոյ մէջ՝ իրրեւ ճարտար հիւանդապահուհի: Եւ քանի որ մեզի համար դեռ կոյս ասպարէզ մըն է այս, վստահ եմ թէ առաջին անգամ եւ անմիջապէս այդ դասընթացքին հետեւողները պիտի ունենան լուսազոյն պատեհութիւնը յաջողելու, բարիք ընելու եւ զբամ շահելու:

ՏՈՒՐԹ. ՅՈՒՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐԸ երեքշաբթի կայս. Պալատ գնաց եւ յիտոյ Բ. Դուռը: Ն. Սըրբազնութիւնը, ի գարձին, Պատրիարքարանի մէջ նախագահեց Կրօնական Ժողովին եւ Նպատախց Ծանծնաթողովին որոնք գումարուեցան յաջորդաբար: Առաջինը զբաղեցաւ քահանայական ու ամուսնական խնդիրներով. երկրորդը՝ զխաւորապէս ուշադրութեան առաւ գաւառային Որբանոցներու արհեստական ճիւղերու խնդրանքները եւ որոշեց առայժմ 50 / ոսկի զրկել Մուշ, ոստայնանկութեան արհեստարանի մը բացման համար:

ԱՐՈՒԵՍՏԱ ՀԱՆ ԴԵՍԸ



ԲԱՐԻԶԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Արուեստահանդեսին Դպրոցը, որ այս տարուան մէջ իրականացող ամէնէն աւելի խելացի ու բեղմնաւոր գաղափարներէն մէկը կը ներկայացնէ, իր տառական իմաստովը պէտք չէ առնել, Բացատրելէ առաջ թէ ի՞նչ է « Արուեստահանդէսի Դպրոց » ըստածը, կ'արժէ արձագանդ տալ բարիգեան թերթեւորու սա գիտողութեանը թէ կէս-դարէ ի վեր Ֆրանսայի մեծ եփքօզիսիօնները կազմակերպող նշանաւոր անձնասիրութեանց ո՛չ մէկուն միտքէն անցած էր այս տեսակ բան մը, 1855ին, 1867ին, 1878ին եւ 1889ին, հիմակուան պէս, յաջողած էին հաստատել ամէնէն չահեկան մրցումները, օգտուիլ բոլոր մասնագիտութիւններէն ու ձեռնհասութիւններէն, հրաշակերտներ արտադրել ու համայն աշխարհի սքանչալու մը գրաւել: Բայց չէին խորհած՝ Արուեստահանդէսը այցելողներուն միջոց հայթայթել իրենց ցոյց տրուածները գիտակցօրէն տեսնելու եւ ըմբռնելու: Այս պարզ ծրագիրն է ահա որ կը գործադրուի այս անգամ, միջազգային հանգամանքով մը, սա անունին տակ. « Միջազգային ընկերակցութիւն՝ գիտութեանց, գեղարուեստից եւ դաստիարակութեան ծաւալման համար » ուսկից կերեւայ որ Ֆրանսայի յատուկ չէ անիկա, ո՛չ ալ ներկայ Արուեստահանդէսին, այլ անոր յաջորդելիքներուն ալ, ամէն երկիրներու մէջ: Սկզբնասիրութիւնը Բարիզէն կ'ըլլայ որուն « Արուեստահանդէսի Դպրոց »-ին նախագահն է Պ. Լէօն Պուրթուա, զանազան ազգերու յատուկ բաժանումներով որոնց իւրաքանչիւրը իր գիւտնը ունի, բազմահմուտ եւ փորձ անձերէ կազմուած: Այս ընկերակցութեան հիմնադիրները սապէս զծած են իրենց ձեռնարկութեան նպատակակէտը. « Դպրոցը յանձն կառնու զի իրութիւն ընծայել հասարակութեան այն մասին որ կը հետաքրքրուի մատուցական բաներով, Արուեստահանդէսը տեսնել գիտա-

կից ու մէթոտիկ կերպով: Կուզէ որ ամէն մարդ կարենայ իր այցելութենէն անցողակի գոհացումի մը հաճոյքէն աւելին ձեռք բերել. մտաւոր ու բարոյական օգուտ մը քաղել: Ասոր համար, ամէնէն ձեռնհաս աջակիցներով (գիտնականներ, բրոֆէսորներ, ճարտարագէտներ, արուեստագէտներ, քննադատներ, օտար բաժանումներու պատուիրակներ, եւայլն) կազմակերպած է, հրապարակախօսութեանց ձեւին տակ, ընդհանուր ու մնայուն ուսումնասիրութիւն մը Արուեստահանդէսի »:

Այս հրապարակախօսութիւնները որոնք սկսան յունիս 5ին (Ն. Տ.) պիտի տեսնեն մինչեւ սեպտեմբեր. բայց որովհետեւ Բարիզցիները շատ ժամանակ չեն գտներ յարատեւ կերպով հետեւելու անոնց եւ օտարականներն ալ կարճ միջոցի մը համար միայն կը մնան Բարիզ, հարկ դատուած է մասնակի յայտագիրներ պատրաստել ամէն դասակարգի «տաշակերտներու» հետաքրքրութեան ու պէտքերուն գոհացում տալու համար: Յայտագիրներուն իւրաքանչիւրը մէկ շարթուան, շրջանի մը կը պատշաճի, եւ անոնց ընդհանուր նիւթերն են գիտական նոր գիւտեր եւ խնդիրներ, գեղարուեստի, դպրութեանց ու ճարտարարուեստներու յատաճգիմութիւնները. եւ ասոնցմէ զատ, «ուղեցոյց-դասեր» զորս պիտի տան վարպետները, առօրեայ այցելութիւններով Արուեստահանդէսի իւրաքանչիւր ճիւղին մէջ ուր հրապարակախօսութիւններ պիտի կատարեն: « Դպրոց »-ին կազմակերպիչները բացած են նաեւ ընդարձակ սրահներ ուր իրենց ունինդիրներուն տրամադրութեան ներքեւ կը դնեն լրագիրներ ու Հանդէսներ: Այսպէս, օտարական մը որ, օրինակի համար, մէկ ամսուան համար Բարիզ կերթայ, այդ չորս շաբաթներուն յատուկ հրապարակախօսութեանց յայտագրին տեղեկանալէ ետքը,

կրնայ ունենդիր արձանագրուել ուզածին չափ
ժամանակամիջոցի մը համար . խոկ եթէ ամ-
բողջ մէկ ամիս չպիտի կրնայ հետեւիլ գտե-
րուն , ընտրել այն եօթնեակը որուն նիւթերը
ամէնէն աւելի կը հետաքրքրեն զինքը :

«Արուեստահանդէսի Դպրոց»-ին ուսուցիչ-
ները ձրիարար կատարել յանձն առած են
այս մտաւորական շինիչ ու կրթիչ գործը :
Ունենդիր արձանագրուողը չարախախտ 25
Ֆր. վճարում մը ընել պարտաւոր է . որմէ
դոյնապէք գումարը պիտի յատկացուի ձեռ-
նարկութեան ընդհանուր ծախքերուն :

Վիճակագրական ծանօթութիւններ .
Ապրիլի կիսուն , Արուեստահանդէսի բաց
ման նուիրուած Բարիզեան Նօթերնուս մէջ
արձանագրեցինք նաեւ առաջին եօթնեակի
այցելուներու թիւին բաղդատական ցուցակը :
Անկէ ի վեր այդ թիւին ստացած համեմա-
տութիւններուն վրայ ընդհանուր գաղափար
մի տալ կարծէ Մախիսի ընթերցողներուն :

Ապրիլ 15էն մինչեւ յունիսի սկիզբը սպառ-
ուած մուտքի տոմսերուն (ticket) գումարն է
մօտաւորապէս հինգ միլիոն : Արդ , եեթա-
դրեւով որ յունիս 13ն մինչեւ նոյեմբեր 5 (Ար-
ուեստահանդէսի փակման համար որոշուած
թուականը) — ընդամենը 158 օր — մուտքե-
րու միջին թիւը մայիսի երկրորդ կիսուն մուտ-
քերէն աւելի չըլլայ — օրական 153 000 տոմս
— 24էն 25 000.000 տոմսակ սպառուած պիտի
ըլլայ , որուն վրայ աւելցնելով բացման օրէն
մինչեւ յունիսի սկիզբը սպառուած 5 միլիոնը,
1900ի Արուեստահանդէսը 1889ի Արուեստա-
հանդէսին վրայ երկու միլիոն մուտքի առա-
ւելութիւն մը պիտի ունենայ : Եւ թափաքա-
նակէ վերջն է այցելուներու թիւը , որ
չըջանը , ինչպէս զգալապէս կը յայտնուի
մակուց կիրակի եւ տօն օրերը :

— Մարտիլայէն Բարիզի թերթերուն ուղ-
ղուած սա հեռագիրը կրնայ դադարաւոր
տալ թէ ինչ կը սպասէ «Բարիզի մարտի»
միջոցի : «Արուեստահանդէսին» սպասուած
մայրաքաղաքը խոնուած բազմութեան սնուն-
դի պէտքերը առեւտրական մեծ շարժում մը
առաջ բերած են Ալժիրիոյ եւ Ֆրանսայի մի-
ջեւ , մասնաւորապէս ի մասին արջառներու
ներմուծման , Յունիս 4ի միակ օրուան մէջ ,

23,000 ոչխար եւ 114 եղ լերուեցան հաս ,
մինչդեռ երեք շարաթ առաջ , օրական ժա-
մանումներու միջին թիւը 14 000ը չէր անց-
նէր :

— Մանրամասն վիճակագրութենէ մը հա-
տադրուած է որ 1889ի Արուեստահանդէսը
500 միլիոն ֆրանքի յաւելում մը պատճառա-
ծ էր Բարիզի առեւտրական շարժումին , սա
զխաւոր բաժանումներով . Օմնիպիւս , չոգե-
նաւ եւ կառք՝ 25 միլիոն , Արուեստահան-
դէսի չըջափակին մէջ գտնուած սրճարան ,
ճաշարան ու գինետուն՝ 20 մ , Քաղքին հա-
մանման հաստատութիւնները՝ 25 մ , Օթէլ-
ները՝ 14 մ , Թատրոնները՝ 5 մ , Վաճառա-
տուն , շուկայ , խանութ , եւ այլն՝ 400 մ ,
Միւս կողմէ , երկաթուղիները 78 միլիոն եւ
թղթատար ու հեռագիր 7 միլիոն ֆր. հասոյթի
առաւելութիւն մը ունեցած են : Արդի Ար-
ուեստահանդէսին կազմակերպիչը , Պ. Ալֆրէտ
Բիքառ , իր նախորդին՝ Պ. Ալֆանի կատա-
րած այս վիճակագրական խուզարկութիւնը
չարունակելով , սա եզրակացութեան յանգած
է , — միշտ մօտաւորապէս ճիշդ համարուող
թուանշաններու հետեւողութեամբ , — թէ
1900ի Արուեստահանդէսը երկու միլիոն
ֆրանքի առեւտուր ստեղծած պիտի ըլլայ
Բարիզի համար , այս իրապէս պատկառելի
գումարին մէկ երրորդը արտագրութեւով Ֆրան-
սայի գաւառներէն մայրաքաղաք զիմու ժո-
ղովուրդէն եւ մնացածը օտար այցելուներէ :

— Ֆիկառօ՝ Արուեստահանդէսին նուիրած
իր վերջին նկարագրութիւններէն մէկուն մէջ՝
մասնաւոր յիշատակութիւն մը կընէ էգնայ-
եան եղբարց ցուցադրած ադամանդի ճոխ
պէտպիտութիւններուն ինչպէս նաեւ տաշման
(taillerie de diamants) գործողութեան զօր
կը կատարեն մասնագէտ վարպետներ ու աշ-
կերտներ , ահնագործութեան յատուկ բաժա-
նումին մէջ , Բարիզեան թերթը հիացումով
կը խօսի այդ ադամանդներուն վրայ օրոնց
մէջ կը գտնուին ամէն գոյն ու ամէն տեսակ-
ները , քանի մը միլիոն ֆրանք արժողութեամբ

ԱՐՈՒԵՏԱՍԷՐ

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. ՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆինեաներար եօղուշու , Թիւ 27

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ

ԳԼԽԱԽՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

ԱՐԵՒԵԼԻՔ (Տէր եւ Տնօրէն Չ. Եռնուֆ. Եան) Թ. 4331—4336 : Նամակ Պարսկաստանէ : — Բռնարի Լիօնէ . Չ. Ե. — Թուրք գրականութիւնը . Ա. Թապախեան : — Ռուս կեանքէ . Ա. Ապրիսեան : — Իզմիրի կեանքէն . Արշաւիր : — Մկրտութեան խորհուրդ մը . Մ. Փանօսեան : — Քահանաներուն ամսականը . Մեսրոպ ֆինկ . Մեղեան : — Տպաւորութիւններ . Մ. Ն. Թարիգեան : — Օղիւն մէջ (մոքի խաղ) Ենովի : — Պարսկահայերը (Խմբագրական) Ա. Ա. — Այվազովսքիի չուրջը Լ. — Տիպար ոսկերիչ մը . Ա. Յ. Այվազեան : — Պարսկական քաղաք մը . Դեղիման : — Պուրտուրցիք եւ իրենց տօնը . Հ :

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Տէր եւ Տնօրէն Տ. Ճիվե. շեկեան) Թ. 377—382 : Մանկական լրագիր . Մ. Ն. Ա. — Գեղեցիկը եւ գեղարուեստը . Վ. — Առեւտրական կեանքը (Խմբագրական) Ջարմաշ : — Արդի Չինաստան . Վ. Արծրունի : — Թրանսպալէն յետոյ . Լիոնիֆ : — Վարդեմակութիւնը եւ շերամարուծութիւնը Պիլաշի մէջ . Ս. Չ. — Կնոջ հարցը . Բ. Ոսկերիչեան : — Վենետիկի Միթրարեան միաբանութեան պաշտպանողականը (Խմբագրական) : — Յակոբ Պարոնեան, երգիծարան—գրագէտ . Չ. — Պարսից Շահին ճամբորդութիւնը (Թղթակցութիւն Դարէյժէ) :

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ (Տէր եւ Տնօրէն Բ. Քե. չեան) Թ. 1101—1106 : Պ. Գր. Թումանեանցի նուէր . Տիրաշր Վրդ : — Առեւտրական աշխարհէն . Ա. Գ. — Թաքուն տաղանդներ (Խըմբագրական) Բիզանդի Քեչեան : — Հայ վանորայք . Տրդատ Եպիսկ. Պաշեան : — Ծննդական ճակատագիրը . Տոք. Ա. Գարագաշ : — Ընդհարում զրամագլխոյ եւ աշխատութեան միջեւ . Հ. Ս. Ճեղաշեան : — Գործաւորներու կեանքէն . Դ. Ջարմաշ : — Պէնտէկոսթէ կամ Հոգեգալուստ . Գիսալ : Ռուսահայոց գործեր (Նամակ Պագուէ) Սմբատ Գարագաշ : — Միթրարեաններուն վէճը . Հայ Հռոմեական :

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ.

ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱԻԵԼԻ ՔԱՆ 25,000 ԲԱՌ. ՈՃ. ԵԻԱՅԷՆ

Գին զօրաւոր փառօքե կազմի 25 դր.

Գին ընթիր լարակազմի 27 դր.

Կեդրոնաւեղին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը

Ֆինանսըր Եօզուլու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով :



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ

34,775,642 Փրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնաւեղին, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մաֆաւսան հին տեղը

Ընդհ. Քննիչ

Ընդհ. Դործակալ

Ա. ՀԻՒՐՄԻՒՉ

ԹէՆՏՈՐ ՌԷՔԷՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՋ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
(ԹԻԻ 27 ՖԻՆԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ)

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 1853 ԻՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Կազմասունք իր ստացած նոր բարեփոխմանովը կը ներկայանայ Պաս. Հրասարակչաց, Գրավանառաց, Թրդ-քավանառաց եւ Արգոյ Հասարակութեան իբր առաջին կարգի հաստատութիւն մը՝ հաւասար եւրոպիոյ ամենէն լաւ կազմասանց։ Նորագոյն եւ կասարեկագործեալ շոգեւարժ մեքենաներու յաւելմամբ՝ գործասունն կարող է, մեր մեջ եղած ամեն ուրիշ կազմասունքներէ աւելի՛ շատ եւ աւելի՛ արագ գործ արտադրել, միեւնոյն ժամանակ վստահացունելով իրեն դիմողները թէ՛ Յ. Մատթէոսեանի արտադրութիւնք ԱՄԵՆ ՄՐՅՈՒՄԷ ՎԵՐ ԵՆ թէ ապրանց լաւութեան եւ թէ աշխատութեան խնամքի կողմէ։

Ասոր լաւագոյն ապացոյցն է երկար տարիներէ ի վեր այս ծան վայելած համբաւը։

Կ'ընդունուին ամեն կարգի յանձնարարութիւնք եւ Պատուարժան յանախորդ վստահրանք ըլլալ թէ ամենափոքր յանձնարարութիւնն իսկ ամենակարեւորին հաւասար՝ նոյն հոգածու խնամքը կը ստանայ։

Գիտեալ չափաւորութեան մասին պզտիկ փորձով մը համոզուիլը լաւագոյն է։

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն Տեսակ շեռակ, կարասի, ապրանք

ԱՆԳԼԻՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ


ԸՆԳԳԵՄ ՀՐԳԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՃԻԱՆԲ

Ընդհանուր գործակաւար Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հանգրուլ խան, Թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան գրաստունն է ԳՐԵՏԻ ԼԻՈՆԷ



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵԻՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնատեղին, Սերբէի, Գէորգիւի խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղալաթիա, Պէտիւք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վճարման եւ ամեն Տեսակի դիւրութիւններ

